ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/69

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձը)՝ քննելով «Ա.Ա.Բ. Պրոյեկտ» ՍՊԸ-ի 14.05.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. <u>«ԱԱԲ Պրոյեկտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Ա.Ա.Բ. Պրոյեկտ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 14.05.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

««Ա.Ա.Բ. Պրոյեկտ» ՍՊԸ–ն մասնակցել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից հայտարարված թիվ ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/2 ծածկագրով «Ջերմուկ համայնքում Երևանյան խճուղի 1-ին փակուղի, Երևանյան խճուղին հատող Մաշտոցի փողոց, Ազատամարտիկների փողոցի ճանապարհների վերականգնման» մրցույթին:

Համաձայն 5 մայիսի 2018թ. մրցույթի հանձնաժողովի գնահատման նիստի N 4 արձանագրության 6.1 կետի՝ Հանձնաժողովը որոշել է «ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/2» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչել «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ին:

«Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված մրցութային փաստաթղթերում առկա են էական անհամապատասխանություններ, որոնք բավարար հիմք են հանդիսանում «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ին հաղթող ճանաչելու որոշումը վերացնելու համար:

Համաձայն մրցույթի հրավերի 8.9 կետի՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այսպիսով, գնային առաջարկը կամ հայտի ապահովումը հրավերի պահանջներին անհամապատասխան ներկայացնելու դեպքում մասնակիցը չի կարող ճանաչվել մրցույթի հաղթող:

«Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ն որպես հայտի ապահովում ներկայացրել է 11.04.2018թ. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից տրված N101611015 բանկային երաշխիքը: Նշված երաշխիքը ստորագրված է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Գ.Մաչանյանի և գլխավոր հաշվապահ Ս.Բաղդասարյանի կողմից:

Ուսումնասիրելով նշված բանկային երաշխիքը՝ պարզ է դառնում, որ գործադիր տնօրեն Գ.Մաչանյանի անվան դիմաց դրված ստորագրությունը իրականում հանդիսանում է մեկ այլ անձի, այլ ոչ թե «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Գ.Մաչանյանի ստորագրությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 383-րդ հոդվածի համաձայն՝ երաշխիք տված անձը (բանկը, այլ վարկային հաստատությունը կամ ապահովագրական կազմակերպությունը) այլ անձի (պրինցիպալի) խնդրանքով գրավոր պարտավորություն է ստանձնում պրինցիպալի պարտատիրոջ (բենեֆիցիարի) հանդեպ, երաշխիքով ստանձնած պարտավորության պայմաններին համապատասխան, բենեֆիցիարին վճարել դրամական գումար՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ներկայացնելիս:

Օրենսգրքի 296-րդ հոդվածի համաձայն՝ գրավոր գործարքը պետք է կնքվի փաստաթուղթ կազմելու միջոցով, որն արտահայտում է գործարքի բովանդակությունը և

ստորագրված է գործարք կնքող անձի կամ անձանց կամ նրանց կողմից պատշաճ ձևով լիազորված անձանց կողմից:

Ելնելով Օրենսգրքի 296-րդ հոդվածի պահանջներից, և համադրելով դրանք «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած բանկային երաշխիքի հետ, ակնհայտ է դառնում, որ «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի կողմից որպես հայտի ապահովում ներկայացված N101611015 բանկային երաշխիքը հանդիսանում է չկնքված գործարք՝ պատշաճ լիազություն չունեցող անձի կողմից ստորագրված լինելու պատճառով, և հետևաբար, չի կարող առաջացնել այն իրավական հետևանքները, որոնք սահմանված են բանկային երաշխիքով:

Բացի վերոգրյալից, «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկը նույնպես չի համապատասխանում մրցույթի հրավերով սահմանված պահանջներին: Այսպես, գնային առաջարկ ներկայացնելու ձևը սահմանված է մրցույթի հրավերով, և դրա պահանջների համաձայն՝ գնային առաջարկը չի կնքվում, եթե այն ստորագրվում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Տվյալ դեպքում «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկը՝ լինելով ստորագրված էլեկտրոնային թվային ստորագրությամբ, նաև կնքվել է ընկերության կնիքով, ինչը համարվում է հրավերի պահանջների անհամապատասխանություն:

Ելնելով վերագրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ, 49-րդ, և 50-րդ հոդվածները, ինչպես նաև մրցույթի հրավերի 7.4 կետը, խնդրում ենք.

1.Վերացնել ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/2 ծածկագրով «Ջերմուկ համայնքում Երևանյան խճուղի 1-ին փակուղի, Երևանյան խճուղին հատող Մաշտոցի փողոց, Ազատամարտիկների փողոցի ճանապարհների վերակառուցման» մրցույթի հանձնաժողովի գնահատման նիստի N 4 արձանագրությունը՝ «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ին մրցույթի հաղթող ճանաչելու մասին:

2.Մրցույթի հաղթող ճանաչել «Ա.Ա.Բ. Պրոյեկտ» ՍՊԸ-ին»:

Բողոքի քննության նպատակով բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Գրիգոր Գրիգորյանը:

2. <u>Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «Ա.Ա.Բ. Պրոյեկտ» ՍՊԸ-ի 14.05.2018թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 17.05.2018թ. թիվ 373 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Համաձայն «Ա.Ա.Բ. Պրոյեկտ» ՍՊԸ-ի 14.05.2018թ. ներկայացված թիվ ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/2 ծածկագրով բաց մրցույթի բողոքի վերաբերյալ.

Ընկերությունը նշում է, որ «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած թիվ 101611015 բանկային երաշխիքը, որը տրված է 11.04.2018թ. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից հանդիսանում է հրավերի պահանջներին ոչ համապատասխանող:

Համաձայն մրցույթի հրավերի 8.9 կետի՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հարկ է նշել, որ հայտերի բացման նիստում արձանագրվել է, որ մրցութային ծրարում բացակայում են հետևյալ կազմակերպությունների կողմից ներկայացված փաստաթղթերը՝

«Ա.Ա.Բ. Պրոյեկտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթում բացակայում էր.

1. Բանկային երաշխիքը ստորագրողի լիազորագիրը,
2. Էլեկտրոնային եղանակով ստորագրված բնակելի, հասարակական, արտադրական և տրանսպորտային ներդիրները:

«Խաչհար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթում բացակայում էր.

1. Բանկային երաշխիքը ստորագրողի լիազորագիրը:

«Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած էլեկտրոնային փաթեթում բացակայում էր.

1. Բանկային երաշխիքը ստորագրողի լիազորագիրը:

Ապրիլի 12-ին բոլոր վերը նշված կազմակերպություններին ուղարկվել է ոչ ավտոմատ ծանուցում՝ բացակայող փաստաթղթերը ներկայացնելու համար:

«Ա.Ա.Բ. Պրոյեկտ» ՍՊԸ-ն, «Խաչհար» ՍՊԸ-ն և «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել են պահանջվող լիազորագրերը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև այն փաստը, որ լիազորագրի ի սկզբանե չներկայացնելը չի կարող հետագայում անհրաժեշտության դեպքում խոչընդոտել մասնակցից հայտի ապահովման գանձման գործընթացին, ապրիլի 16-ին բացման նիստում գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը ճանաչվեց բավարար գնահատված մասնակիցների թվից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը՝ «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ն:

Ընկերությունը իր բողոքի մեջ նշում է նաև, որ «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի գնային առաջարկը համարվում է հրավերի պահանջներին անհամապատասխան, քանի որ լինելով ստորագրված էլեկտրոնային թվային ստորագրությամբ, նաև կնքվել է կնիքով: Նկատի ունենալով, որ բովանդակային առումով մասնակիցը կատարել է գնային առաջարկի լրացման պահանջները, գտնում ենք, որ նման իրավիճակում ձևական սխալների պատճառով հայտի անբավարար գնահատման համար հիմքեր առկա չեն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք մերժել «Ա.Ա.Բ. Պրոյեկտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Լիլիթ Սեդրակյանը:

3. <u>«Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ԳԲԽ-ԷՍ-2018/69 բողոքի քննության շրջանակներում որպես երրորդ անձ ներգրավված «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ն 21.05.2018թ. գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ ներկայացրել է առարկություն հետևյալ բովանդակությամբ.

««ԱԱԲ Պրոյեկտ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Բողոքաբեր) 14.05.2018թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Է. Սարգսյանին ներկայացված թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/69 բողոքով Բողոքաբերը հայտնել է հետևյալը.

«ԱԱԲ Պրոյեկտ» ՍՊԸ-ն մասնակցել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից «Ջերմուկ համայնքում Երևանյան խճուղի 1-ին փակուղի, Երևանյան խճուղին հատող Մաշտոցի փողոց, Ազատամարտիկների փողոցի ճանապարհների

վերակառուցման» նպատակով հայտարարված թիվ «ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/2» մրցույթին (այսուհետ նաև՝ Մրցույթ):

Համաձայն 2018թ. մայիսի 5-ի մրցույթի հանձնաժողովի գնահատման նիստի թիվ 4 արձանագրության 6.1 կետի՝ հանձնաժողովը որոշել է «ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/2» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչել «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ին:

Բողոքաբերը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն է հրավիրել, ըստ իրեն՝ «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված մրցույթային փաստաթղթերում առկա էական անհամապատասխանությունների վրա, որոնք բավարար հիմք են հանդիսանում «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ին Մրցույթի հաղթող ճանաչելու մասին որոշումը վերացնելու համար:

Բողոքաբերը վկայակոչել է Մրցույթի հրավերի 8.9 կետը, որի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնայինեղանակով տեղեկացնում է մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետը ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այսպիսով, գնային առաջարկը կամ հայտի ապահովումը հրավերի պահանջներին ոչ համապատասխան ներկայացնելու դեպքում մասնակիցը չի կարող ճանաչվել մրցույթի հաղթող:

«Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ն որպես հայտի ապահովում ներկայացրել է 11.04.2018թ. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից տրված N101611015 բանկային երաշխիքը: Նշված երաշխիքը ստորագրված է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Գ. Մաչանյանի և գլխավոր հաշվապահ Ս. Բաղդասարյանի կողմից:

Ուսումնասիրելով նշված բանկային երաշխիքը՝ Բողոքաբերին պարզ է դառնում, որ գործադիր տնօրեն Գ. Մաչանյանի անվան դիմաց դրված ստորագրությունը իրականում հանդիսանում է մեկ այլ անձի, այլ ոչ թե «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Գ. Մաչանյանի ստորագրությունը:

Բողոքաբերը վկայակոչել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 383-րդ հոդվածը, որը սահմանում է բանկային երաշխիքի հասկացությունը,

համաձայն որի երաշխիք տված անձը (բանկը, այլ վարկային հաստատությունը կամ ապահովագրական կազմակերպությունը) այլ անձի (պրինցիպալի) խնդրանքով գրավոր պարտավորություն է ստանձնում պրինցիպալի պարտատիրոջ (բենեֆիցիարի) հանդեպ, երաշխիքով ստանձնած պարտավորության պայմաններին համապատասխան, բենեֆիցիարին վճարել դրամական գումար՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ներկայացնելիս:

Օրենսգրքի 296-րդ հոդվածի համաձայն՝ գրավոր գործարքը պետք է կնքվի փաստաթուղթ կազմելու միջոցով, որն արտահայտում է գործարքի բովանդակությունը և ստորագրված է գործարք կնքող անձի կամ անձանց կամ նրանց կողմից պատշաճ ձևով լիազորված անձնաց կողմից:

Ելնելով Օրենսգրքի 296-րդ հոդվածի պահանջներից և համադրելով դրանք «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած բանկային երաշխիքի հետ, Բողոքաբերին ակնհայտ է դառնում այն, որ «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված և հայտի ապահովում հանդիսացող N101611015 բանկային երաշխիքը հանդիսանում է չկնքված գործարք՝ պատշաճ լիազորություն չունեցող անձի կողմից ստորագրված լինելու պատճառով, և, հետևաբար, չի կարող առաջացնել այն իրավական հետևանքները, որոնք սահմանված են այդ բանկային երաշխիքով:

Բացի վերոգրյալից, Բողոքաբերը նշել է, որ «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկը նույնպես չի համապատասխանում Մրցույթի հրավերով սահմանված պահանջներին: Այսպես՝ գնային առաջարկ ներկայացնելու ձևը սահմանված է Մրցույթի հրավերով, և այդ ձևաթղթի պահանջների համաձայն՝ գնային առաջարկը չի կնքվում, եթե այն ստորագրվում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Տվյալ դեպքում «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկը լինելով ստորագրված էլեկտրոնային թվային ստորագրությամբ, նաև կնքվել է ընկերության կնիքով, ինչը համարվում է հրավերի պահանջների անհամապատասխանություն:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 46-րդ, 49-րդ և 50-րդ հոդվածները, ինչպես նաև Մրցույթի հրավերի 7.4 կետը՝ Բողոքաբերը խնդրել է վերացնել «ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/2» ծածկագրով «Ջերմուկ համայնքում Երևանյան խճուղի 1-ին փակուղի, Երևանյան խճուղին հատող Մաշտոցի փողոց, Ազատամարտիկների փողոցի ճանապարհների վերակառուցման» մրցույթի հանձնաժողովի գնահատման նիստի թիվ 4

արձանագրությունը «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ին Մրցույթի հաղթող ճանաչելու մասին և Մրցույթի հաղթող ճանաչել «Ա.Ա.Բ. Պրոյեկտ» ՍՊԸ-ին:

Առարկության իրավական հիմքերը և հիմնավորումները.

ա) «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված բանկային երաշխիքը գործադիր տնօրեն Գ. Մաչանյանի անվան դիմաց այլ անձի կողմից ստորագրվելու վերաբերյալ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Սույն ընթացակարգին մասնակցելու նպատակով «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ն մրցույթի գնահատող հանձնաժողովին է ներկայացրել «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված թիվ N101611015 բանկային երաշխիքը, որտեղ գործադիր տնօրեն Գ.Մաչանյանի անվան դիմաց դրված է այլ անձի ստորագրություն, իսկ անվան կողքին դրված է համապատասխան նշան՝ Գ.Մաչանյանի փոխարեն այլ անձի կողմից ստորագրելու վերաբերյալ:

Վերոգրյալի հետ կապված հայտնում ենք, որ «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի ներկայացուցիչը գնահատող հանձնաժողովի պահանջով լրացուցիչ ներկայացրել է նաև «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 04.04.2018թ. տրամադրված թիվ 1060/11 լիազորագրի բնօրինակը, որով ամրագրված է հետևյալը.

«Սույնով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն լիազորում է Գործադիր տնօրենի տեղակալ-Վարկավորման դեպարտամենտի տնօրեն Գրիգոր Վիլիկի Հովհաննիսյանին «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի անունից ստորագրել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից «Ջերմուկ համայնքում Երևանյան խճուղի 1-ին փակուղի, Երևանյան խճուղին հատող Մաշտոցի փողոց, Ազատամարտիկների փողոց ճանապարհների վերակառուցման» աշխատանքների կատարման համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ին տրամադրվող բանկային երաշխիքի նամակը, վարկի տրամադրման պայմանները, կատարել այն բոլոր գործողությունները, որոնք կապված են սույն լիազորությունների իրականացման հետ:

Գրիգոր Հովհաննիսյանի կողմից «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի անունից կատարված գործողություններով և պայմանագրերով իրավունքները և պարտականությունները ձեռք է բերում «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն:

Սույն լիազորագիրը տրվում է երկու ամիս ժամկետով, առանց վերալիազորման իրավունքի»:

Նման պայմաններում, երբ «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված և հայտի ապահովում հանդիսացող N101611015 բանկային երաշխիքի հետ միաժամանակ առկա է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված վերոշարադրված բովանդակությամբ լիազորագիր, ուստի գտնում ենք, որ N101611015 բանկային երաշխիքը հանդիսանում է պատշաճ բանկային երաշխիք, այն լիովին համապատասխանում է ՀՀ քաղ. օր-ի 296-րդ հոդվածի պահանջներին, և այդ պարագայում մրցույթի գնահատող հանձնաժողովը «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելով՝ գործել է իրավաչափ:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ Մրցույթի հրավերը չի նախատեսել հայտի ապահովում հանդիսացող բանկային երաշխիքի օրինակելի ձև, ուստի և տվյալ դեպքում կիրառելի չէ Բողոքաբերի կողմից վկայակոչված Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավական կարգավորումը:

Մեր կարծիքով, տվյալ դեպքում կիրառելի է ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 67-րդ կետով նախատեսված դրույթը առ այն, որ գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Ուստի Բողոքաբերի դիրքորոշումը այս հարցի կապակցությամբ անհիմն է և ենթակա է մերժման:

բ) «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի կողմից գնային առաջարկ հավելված 6-ը կնքված և էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու վերաբերյալ.

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ «ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/2» ծածկագրով մրցույթի հրավերի գնային առաջարկ հավելված 6-ով սահմանվում է, որ գնային առաջարկը չի կնքվում, եթե այն ստորագրվում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Այսինքն վերոնշվածից երևում է, որ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատվելու դեպքում գնային առաջարկը կնքելը պարտադիր չէ, այսինքն էլեկտրոնային ստորագրությամբ հաստատելուց զատ կնքելը դեռևս չի նշանակում, որ Ընկերության կողմից ներկայացված հայտը ենթակա է մերժման և պետք է որակել որպես հրավերի պահանջներին անհամապատասխան:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 32-րդ կետի 12-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով համարումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

«Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի կողմից գնային առաջարկ հավելված 6-ը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատելու պայմաններում, գտնում ենք, որ այն լիովին համապատասխանում է գնումների մասին ՀՀ օրենսդրության և Մրցույթի հրավերի պահանջներին:

Միևնույն ժամանակ, մեր կարծիքով, գնային առաջարկի վրա առկա կնիքը նշված գնային առաջարկը դեռևս չի դարձնում անվավեր փաստաթուղթ:

Ուստի Բողոքաբերի պնդումը այս մասով նույնպես, մեր կարծիքով, անհիմն է և ենթակա է մերժման»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի լիազորված ներկայացուցիչներ Արթուր Պարանյանը և Հասմիկ Ենգոյանը:

4. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/69 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ««Ա.Ա.Բ. Պրոյեկտ» ՍՊԸ-ի 14.05.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/2 ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/2 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 12.04.2018թ. հայտերի բացման նիստի N 2 և 16.04.2018թ. նիստի N3 արձանագրությունները, «Ա.Ա.Բ. Պրոյեկտ» ՍՊԸ-ի և «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտերի պատճենները, Պատվիրատուի 17.05.2018թ. թիվ 373 գրությամբ հայտնած դիրքորոշումը.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար կազմակերպված ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/2 ծածկագրով բաց մրցույթին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ են ներկայացրել «Ա.Ա.Բ.Պրոյեկտ» ՍՊԸ-ն և «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ն:

«Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ն մասնակցության հայտի ապահովումը ներկայացրել է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից տրված՝ 04.058.2018թ. թվագրված N18-0021 բանկային երաշխիքի ձևով, որը ստորագրված է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Գ.Մաչանյանի և գլխավոր հաշվապահ Ս. Բաղդասարյանի կողմից:

Հանձնաժողովի 12.04.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի N 2 արձանագրության 4.3 կետի համաձայն՝ «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած էլեկտրոնային փաթեթում բացակայում է բանկային երաշխիքը ստորագրողի լիազորագիրը:

Նույն արձանագրության 5.1 կետով Հանձնաժողովը որոշել է բացման նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ին առաջարկել ներկայացնել բացակայող փաստաթուղթը:

Հանձնաժողովի 16.04.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի N 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է բացակայող փաստաթուղթը:

Նույն արձանագրության 8.1 կետով հանձնաժողովը որոշել է «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ին ճանաչել ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/2 ծածկագրով բաց մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից՝ բավարար գնահատված մասնակիցների թվից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

«Ա.Ա.Բ.Պրոյեկտ» ՍՊԸ-ն բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով վիճարկել է «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ին «ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/2» ծածկագրով բաց մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին Հանձնաժողովի 16.04.2018թ. նիստի N 3 արձանագրության 8.1 կետով կայացված որոշման իրավաչափությունը: Բողոքաբերի պնդմամբ, «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված մրցութային փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, որոնք հիմք են հանդիսանում վերջինիս՝ հաղթող ճանաչելու մասին որոշումը վերացնելու համար: Մասնավորապես, Ընկերությունը մատնանշել է «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի կողմից որպես հայտի ապահովում ներկայացրած «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից տրված բանկային երաշխիքը մեկ այլ անձի, այլ ոչ թե «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Գ. Մաչանյանի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչի մասին է վկայում «գործադիր տնօրեն» բառակապակցության դիմաց դրված գծիկը: Որպես «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի հայտը մերժելու երկրորդ փաստարկ բողոքաբերը նշել է, որ «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկը նույնպես չի համապատասխանում մրցույթի հրավերով սահմանված պահանջներին, քանի որ գնային առաջարկը՝ լինելով ստորագրված էլեկտրոնային թվային ստորագրությամբ, նաև կնքվել է մասնակցի կնիքով, ինչը, ըստ «Ա.Ա.Բ.Պրոյեկտ» ՍՊԸ-ի, չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի մոտ տեղի ունեցած նիստի ժամանակ պատվիրատուի ներկայացուցիչը առարկեց բողոքաբերի վերը նշված պնդումներին, և հայտնեց, որ մասնակիցը ներկայացրել է «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած էլեկտրոնային փաթեթում բացակայող բանկային երաշխիքը ստորագրողի լիազորագիրը՝ Հանձնաժողովի կողմից նշված անհամապատասխանությունը շտկելու համար տրամադրած մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Ինչ վերաբերում է «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի գնային առաջարկը հրավերի պահանջներին անհամապատասխան որակելու բողոքաբերի պնդմանը, ապա Պատվիրատուի ներկայացուցչի կարծիքով, մասնակիցը բովանդակային առումով կատարել է գնային առաջարկի լրացման պահանջները, և նման պայմաններում կնիքի առկայությունը հանդիսանում է վերջինիս կողմից թույլ տված ձևական սխալ, ինչի պատճառով նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի հայտի մերժումը հիմնազուրկ է:

Պատվիրատուն Բողոքը քննող անձին ներկայացրեց «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի՝ ի դեմս գործադիր տնօրեն Գևորգ Մաչանյանի, կողմից վարկավորման դեպարտամենտի տնօրեն Գրիգոր Հովհաննիսյանին տրամադրված 04.04.2018թ. թիվ 1060/11 լիազորագրի պատճենը, որով վերջինս լիազորվում է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի անունից ստորագրել տվյալ մրցույթի մասնակցելու համար «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ին տրամադրած բանկային երաշխիքի նամակը(...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 296-րդ հոդվածի համաձայն՝ գրավոր գործարքը պետք է կնքվի փաստաթուղթ կազմելու միջոցով, որն արտահայտում է գործարքի բովանդակությունը և ստորագրված է գործարք կնքող անձի կամ անձանց կամ նրանց կողմից պատշաճ ձևով լիազորված անձանց կողմից:

Օրենսգրքի 321-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: Ներկայացվողը ներկայացուցչի կողմից գործարքներ կնքելու համար գրավոր լիազորություն կարող է անմիջականորեն տալ համապատասխան երրորդ անձին:

• 5-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:

Օրենսգրքի 383-րդ հոդվածի համաձայն՝ երաշխիք տված անձը (բանկը, այլ վարկային հաստատությունը կամ ապահովագրական կազմակերպությունը) այլ անձի (պրինցիպալի) խնդրանքով գրավոր պարտավորություն է ստանձնում պրինցիպալի պարտատիրոջ (բենեֆիցիարի) հանդեպ, երաշխիքով ստանձնած պարտավորության պայմաններին համապատասխան, բենեֆիցիարին վճարել դրամական գումար՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ներկայացնելիս:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ)

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ, եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած, ապա սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնում է դրա բնօրինակը:

- 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

- 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

- 66-րդ կետի համաձայն՝ մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

- 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

«ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/2» ծածկագրով բաց մրցույթի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի՝

- 7.1 ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ նույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին: 1-4 չափաբաժինների համար հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

-7.4 ենթակետի համաձայն՝ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր:

- 8.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ն որպես հայտի ապահովում ներկայացրել է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից տրված բանկային երաշխիքը, որում գործադիր տնօրեն Գ.Մաչանյանի անվան դիմաց դրված է այլ անձի ստորագրություն, իսկ անվան դիմաց դրված է համապատասխան նշան՝ Գ.Մաչանյանի փոխարեն այլ անձի կողմից ստորագրելու վերաբերյալ:

- բանկային երաշխիքը ստորագրած անձին՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի վարկավորման դեպարտամենտի տնօրեն Գրիգոր Հովհաննիսյանին նույն բանկի գործադիր տնօրեն Գևորգ Մաչանյանի կողմից 04.04.2018թ. տրամադրվել է թիվ 1060/11 լիազորագիրը, որով Գրիգոր Հովհաննիսյանը լիազորվում է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի անունից ստորագրել մրցույթին մասնակցելու համար «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ին տրամադրած բանկային երաշխիքի նամակը(...):

- «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացված՝ մասնակցի հայտով ներկայացված գնային առաջարկի վրա առկա է նաև «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի կնիքը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Համադրելով վերը նշված իրավանորմերը և փաստական հանգամանքները՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/2» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ն որպես հայտի ապահովում ներկայացրած «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից տրված՝ 04.05.2018թ. N18-0021 բանկային երաշխիքը ստորագրվել է պատշաճ ձևով լիազորված անձի կողմից, հետևաբար, բողոքաբերի այն փաստարկը, որ բանկային երաշխիքը հանդիսանում է չկնքված գործարք՝ պատշաճ լիազություն չունեցող անձի կողմից ստորագրված լինելու պատճառով, անհիմն է:

Միաժամանակ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած էլեկտրոնային փաթեթում բանկային երաշխիքը ստորագրողի լիազորագրի բացակայության պայմաններում Հանձնաժողովը՝ առաջնորդվելով Կարգի 67-րդ կետի պահանջներով, կարող էր ստուգել մասնակցի ներկայացրած բանկային երաշխիքի իսկությունը՝ օգտագործելով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից ստացված տեղեկատվությունը, այլ ոչ թե մեկ աշխատանքային օրով կասեցներ Հանձնժողովի նիստը՝ առաջարկելով մասնակցին շտկել արձանագրված անհամապատասխանությունը, քանի որ Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա արձանագրված անհամապատասխանությունը շտկման ենթակա չէ:

Ինչ վերաբերում է «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի գնային առաջարկի վրա մասնակցի կնիքի առկայությանը, ապա Բողոքներ քննող անձը գտնում է, որ վերը նշված

փաստաթուղթը բովանդակային առումով ամբողջական և վավեր է՝ ստորագրված է մասնակցի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ կնիքը տվյալ դեպքում կարող է դիտարկվել որպես հրավերով չնաատեսված՝ մասնակցի կողմից ներկայացված լրացուցիչ տեղեկություն (վավերապայման), որը չի կարող հիմք հանդիսանալ մասնակցի հայտը անբավարար գնահատելու համար:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ա.Ա.Բ. Պրոյեկտ» ՍՊԸ-ի 14.05.2018թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ